ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«03» սեպտեմբերի 2025 թվականի N 1053**

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 15-Ն որոշումը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները սոցիալական աջակցություն ստանալու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել ֆինանսական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից

| | | | | |
|---|---|---|---|---|
| Անդրյան | Դեզդեմոնա | AR0283864 | 30000 | դրամ |
| Հակոբյան | Ամալյա | AU0455444 | 20000 | դրամ |

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02» սեպտեմբերի 2025 թվականի N 1052

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Վարդիթեր Սիմոնյանի կողմից ինքնակամ կառուցված 53.2 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը, հարթակը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Դատշին» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023NZYKFL ծածկագրի:

2. Առևտրի սրահի սպասարկման նպատակով առանձնացված 68.1 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողատարածքի գործառնական նշանակությունը համարել փոխված՝ որպես բնակավայրերի հասարակական կառուցապատման հողատարածք՝ նկատի ունենալով, որ հողամասով անցնող խմելու ջրագիծը Չարենցավան համայնքում 2016-2017թթ. ընթացքում իրականացված «Չարենցավան քաղաքի ջրամատակարարման համակարգի բարելավումը» ծրագրի շրջանակներում տեղափոխվել է, որի արդյունքում նշված հողամասն այլևս չի դասվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի դասին:

3. Ընդունել ի գիտություն, որ՝

1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:

3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան Պ. Պռոշյան փողոց թիվ 24/3*** հասցեով:

5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:

6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Վարդիթեր Սիմոնյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«02» սեպտեմբերի 2025 թվականի N 1051**

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Ա. Վանոյանի 2025 թվականի սեպտեմբերի 01-ի թիվ 4213/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն ***Անդրանիկ Վանոյանին*** սեփականության իրավունքով պատկանող ***Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 35-րդ փողոց թիվ 14 հասցեի հողամասը*** բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես ***Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 35-րդ փողոց թիվ 14*** (հողամասի մակերեսը՝ 0.0600 հա) և ***Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 35-րդ փողոց թիվ 14/1*** (հողամասի մակերեսը՝ 0.0600 հա) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Գիս-Արտ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02» սեպտեմբերի 2025 թվականի N 1050

# ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Ս. Բարեղամյանի 2025 թվականի սեպտեմբերի 01-ի թիվ 4210/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն ***Ստեփան Բարեղամյանին*** սեփականության իրավունքով պատկանող ***Չարենցավան համայնք գյուղ Բջնի 2-րդ փողոց թիվ 10 հասցեի գույքը*** բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես ***Չարենցավան համայնք գյուղ Բջնի 2-րդ փողոց թիվ 10*** (հողամասի մակերեսը՝ 0.0778 հա) և ***Չարենցավան համայնք գյուղ Բջնի 2-րդ փողոց թիվ 10/1*** (հողամասի մակերեսը՝ 0.0582 հա) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Տուֆ Ռիելթի» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«02» սեպտեմբերի 2025 թվականի N 1049**

## ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ 5-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 5-ՐԴ ՇԵՆՔ ԹԻՎ 47 ՇԻՆՈՒԹՅԱՆ/ԲԱՑՎԱԾՔ/ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 02-ի թիվ 88-Ն որոշման դրույթներով և հաշվի առնելով Ս. Մուրադյանի 27.08.2025թ. թիվ 4145/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սուրեն Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Չարենցավան 5-րդ թաղամաս 5-րդ շենք թիվ 47 հասցեի շինություն-բացվածքի գործառնական նշանակությունը համարել փոխված՝ **որպես բնակելի նպատակային նշանակության բնակարան**:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«02» սեպտեմբերի 2025 թվականի N 1048**

## ԼԻԴԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԲՋՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-019-0304-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով՝ **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով **Լիդա Միքայելյանին** պատկանող Չարենցավան համայնք գյուղ Բջնի վարչական տարածքում գտնվող **07-019-0304-0001** կադաստրային ծածկագրով հողատարածքը հասցեավորել որպես ***Չարենցավան համայնք գյուղ Բջնի 1-ին փողոց 3-րդ նրբանցք թիվ 2/1:***
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**«01» սեպտեմբերի 2025 թվականի N 1047**

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Հ. Գուլոյանի 2025 թվականի օգոստոսի 29-ի թիվ 4192/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն ***ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Հովսեփ և Արայիկ Գուլոյաններին*** պատկանող ***Չարենցավան համայնք գյուղ Բջնի 12-րդ փողոց 4-րդ փակուղի թիվ 2 հասցեի գույք*** բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես ***Չարենցավան համայնք գյուղ Բջնի 12-րդ փողոց 4-րդ փակուղի թիվ 2*** (հողամասի մակերեսը՝ 0.0645 հա) և ***Չարենցավան համայնք գյուղ Բջնի 12-րդ փողոց 4-րդ փակուղի թիվ 2/1*** (հողամասի մակերեսը՝ 0.0645 հա) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Գեոլենդ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱ**

ՀՀ ԿոտայքիմարզիՉարենցավանիհամայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանիանվ.հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«01» սեպտեմբերի 2025 թվականի N 1046**

## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 31-րդ հոդվածի դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. 2025 թվականի սեպտեմբերի 01-ից սկսել Չարենցավան համայնքի 2026 թվականի բյուջետային գործընթացը:

***2. Հանձնարարել՝***

***ա) Ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնին՝***

1) ՀՈԱԿ-ներից բյուջետային հայտերն ընդունել մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը,
2) Մշակել Չարենցավանի համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների ծախսերի նորմատիվները,
3) Համապատասխան պետական կառույցներից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջել համայնքի 2026 թվականի բյուջեի եկամուտների հաշվարկման համար տեղեկություններ,
4) 2026 թվականի բյուջեի նախագիծը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի ղեկավարին ներկայացնել մինչև 2025 թվականի նոյեմբերի 12-ը:

***բ) Քաղաքաշինության, ճարտարապետության,գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնին՝*** ներկայացնել Չարենցավան համայնքում 2026 թվականին նախատեսվող բարեկարգման, կանաչապատման, ընթացիկ և կապիտալ շինարարական աշխատանքների ցանկը, թերությունների ակտերը և նախահաշիվները՝ համապատասխան հիմնավորումներով:

***գ) Առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման, քաղաքաշինության, ճարտարապետության,գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժիններին*** համատեղ հաշվարկել և ներկայացնել առաջարկություն 2026 թվականի համայնքի բյուջե գանձվող հարկային և հարկային եկամուտների կանխատեսվող չափերը:

***դ) Կրթության,մշակույթի սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնին՝*** ներկայացնել Չարենցավան համայնքում 2026 թվականին իրականացվելիք միջոցառումների ցանկը, ծախսերի նախահաշիվները՝ համապատասխան հիմնավորումներով:

ե) ***Զարգացման ծրագրերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնին՝*** ներկայացնել 2026 թվականին անհրաժեշտ համակարգչային, պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ցանկը, սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների ցանկը, ծախսերի նախահաշիվները՝ համապատասխան հիմնավորումներով:

զ) ***Աշխատակազմի քարտուղարին՝*** 2026 թվականի բյուջետային գործընթացը սկսելու վերաբերյալ իրազեկել համայնքային կազմակերպություններին և համատիրություններին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

**«29» օգոստոսի 2025 թվականի N 1045**

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 15-Ն որոշումը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները սոցիալական աջակցություն ստանալու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել ֆինանսական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Թևանյան | Ռամիլ | AR0567727 | 25000 | դրամ |
| Մենեշյան | Մարի | AU0538006 | 20000 | դրամ |
| Գալստյան | Աննա | AT0416892 | 15000 | դրամ |
| Գրիգորյան | Լալա | 018331892 | 15000 | դրամ |
| Մանուկյան | Մելինա | 012348835 | 15000 | դրամ |
| Գուլյան | Էմմա | AO0215736 | 15000 | դրամ |
| Կիրակոսյան | Թագուհի | AR0233259 | 15000 | դրամ |
| Գրիգորյան | Քրիստինա | AS0291140 | 15000 | դրամ |
| Արշակյան | Ալվարդ | AV0537545 | 15000 | դրամ |
| Հովհաննիսյան | Մարիաննա | AS0470926 | 15000 | դրամ |
| Գրիգորյան | Աննա | 018770164 | 15000 | դրամ |
| Ղարախանյան | Ռոզիկ | 005139357 | 10000 | դրամ |
| Նազարյան | Հասմիկ | AL0529545 | 10000 | դրամ |
| Թարվերդյան | Հասմիկ | AU0428087 | 10000 | դրամ |
| Ասատրյան | Դուսյա | AL0563126 | 10000 | դրամ |
| Միրզաջանյան | Գոհար | AX0479290 | 10000 | դրամ |
| Մաթևոսյան | Արփենիկ | AO0237516 | 10000 | դրամ |
| Կորնեևա | Ալլա | 009888520 | 10000 | դրամ |
| Միրզաջանյան | Մարիամ | AV0455501 | 10000 | դրամ |
| Ազարյան | Անուշ | AX0205232 | 10000 | դրամ |
| Գրիգորյան | Քնարիկ | AL0532192 | 10000 | դրամ |
| Մանուչարյան | Եվգենյա | AX0285065 | 10000 | դրամ |
| Սահակյան | Վարսիկ | 017232521 | 10000 | դրամ |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**«29» օգոստոսի 2025 թվականի N 1044**
**ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ 6-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 7/1 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Սամվել Պողոսյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 18082025-07-0225 վկայական) ***ք. Չարենցավան Մ. Խորենացու փողոց 6-րդ փակուղի թիվ 7/1*** հասցեում գտնվող 52.2 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 26.1 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Սամվել Պողոսյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1673 (հազար վեց հարյուր յոթանասուներեք) դրամ (տարածագնահատման 12-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2890 (երկու հազար ութ հարյուր իննսուն) դրամ:

3. ***Սամվել Պողոսյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 88000 (ութսունութ հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 76000 (յոթանասունվեց հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Սամվել Պողոսյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. Բաժնի առաջատար մասնագետ ***Ռուդիկ Սահակյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Սամվել Պողոսյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«29» օգոստոսի 2025 թվականի N 1043**

## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ՀՐԱՇՔ», ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԶԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ,ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՓԱՐՍ ԳՅՈՒՂԻ ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԶԵՂՉ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի թիվ 8-Ա որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի Արզական գյուղի մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ներքոհիշյալ սաների համար սահմանել ծնողական վճարի 50% զեղչ՝

***Մարիա Մելքոնյան*** ***Անահիտ Նավասարդյան***
***Մոնթե Մելքոնյան***

2. Չարենցավան համայնքի Ալափարս գյուղի մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ներքոհիշյալ սանի համար սահմանել ծնողական վճարի 50% զեղչ՝

***Դավիթ Անտոնյան***

3. Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Հրաշք» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ներքոհիշյալ սանի համար սահմանել ծնողական վճարի 50% զեղչ՝

***Մարիաննա Հովեյան***

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սեպտեմբերի 01-ից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**